1900

ՕՋԱԽԻ ԵՐԳԸ

Քեֆ անենք, տղերք – այս պետք է մնա.
Ապրենք պարերով, խաղով ու թառով,
Կյանքներս թող միշտ այսպես անց կենա,
Թեկուզ և պակաս մի քանի տարով։

Գնանք մեր ջահել սրրտի ետևից,
Ուր կուզե տանի – մին է մեզ համար.
Նա էլ մեզ նման հոգնել է ցավից,
Ուզում է հարբել մոլի, խելագար։

Իդեալներ ունենք – փակած պադվալում,
Ո՞վ գիտի՝ այն էլ մրկները կերան,
Հույսեր ունեինք, տենչեր ունեինք –
Իրար ետևից մաշվեցին կորան։

Էլ ընչի՞ հսկենք, ընչից վախենանք,
Ամեն բան անցավ իզուր, անկատար,
Գոնե մեր սրրտի ետևից գնանք,
Նա էլ մեզ նման այս կյանքում օտար...

Զարկեցեք թառին, թող գինին հոսի,
Պատերը դողան մեր ծափ-ծիծաղից,
Թող դըրսից նայող հիմարը ասի –
Այս մարդիկ չունեն ո՛չ խելք, ո՛չ թախիծ։